ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ <<ՍԱՐԱՏՈՎԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

2024-2029թթ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն
2. Դպրոցի առաքելությունը
3. Հաստատության գործունեությունը.
4. Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.
5. **Նպատակների և խնդիրների սահմանումը**. /սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը, պատասխանատուները., արդյունքների գնահատման

չափանիշները. ռիսկերը. գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները./

6. Վերահսկողության մեխանիզմները

1. Ներածություն

Այս զարգացման ծրագիրը մշակվել է՝ հաշվի առնելով ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 10-րդ կետի 3-րդ ենթակետի և ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ սեպտեմբերի 22-ի 35- Ն հարամանի պահանջները : Ծրագրի մշակման հիմքում ընկած են կրթության ոլորտը կարգավորող վերը թվարկված իրավական ակտերը և ՀՀ « ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022թ սեպտեմբերի 22-ի թիվ 35-Ն հրամանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 18 ապրիլի 2023 թվականի N 399-Ա հրամանը:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝

«Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, ՀՀ « Աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի հաստատության հաստատած տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն), անհատական իրավական ակտեր:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Դպրոցի զարգացման ծրագիրը հաստատության ռազմավարական փաստաթուղթն է, որի հիման վրա պլանավորվում է աշխատանքը հաստատությունում: Ծրագիրը կազմվում է 5 տարվա համար և ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝

1) հաստատության գործունեությունը.
2) իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.
3) նպատակների և խնդիրների սահմանումը.
4) սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.
5) պատասխանատուները.
6) արդյունքների գնահատման չափանիշները.
7) ռիսկերը.
8) գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.

Դպրոցի զարգացման ծրագիրը պլանավորված գործողությունների ու ներդրումների միասնական համալիր է, որն ուղղված է որոշակի ժամանակահատվածում նախանշված նպատակների ու խնդիրների իրագործմանը, միջազգային ու ազգային կրթական պահանջների բավարարմանը:

2. Դպրոցի առաքելությունը

Տեխնոլոգիաների արագ զարգացման պայմաններում ապագայի կրթական կարիքները կանխատեսելը դարձել է բավականին բարդ: Ուստի անհրաժեշտ է ունենալ կրթական ճկուն, դինամիկ զարգացող համակարգ: Դպրոցը պետք է ունենա այնպիսի առաջնորդներ ու մանկավարժներ, որոնք ունակ ենմշտապես նորի հետ քայլելու, նորն ընկալելու, ինքնակրթվելու և ժամանակի պահանջներին համապատասխանելու:

12 ամյա պարտադիր կրթությունը նպատակ ունի աշակերտներին տալու այն կրթությունն ու դաստիարակությունը, որը կյանքնում նրանց կդարձնի ժամանակի պահանջներին համապատասխան մրցունակ քաղաքացի:Մեր խնդիրն է ապահովել կրթության իրավունքի լիարժեք իրացման համար նպաստավոր միջավայր:

Աշակերտները դպրոցում պետք է ձեռք բերեն այնպիսի գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ և կարողունակություններ, որոնք հնարավորություն կտան ապագայի անծանոթ պայմաններում արագ կողմնորոշվել ու լինել մրցունակ, թե հայրենիքում թե հայրենիքի սահմաններից դուրս: Պետք է ունենա քննադատական, վերլուծական, համեմատական, ստեղծագործական մտածողություն, կարողական մշտապես սովորել և սովորեցնել:

ՀՀ Հանրակրթության մասին օրենքի հոդված 4 սահմանում է.

«Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

2.1. Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը:

3. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը»:

Դպրոցի առաքելությունը սովորելու ունակություն ունեցող, սովորելն արժևորող քաղաքացիներ պատրաստելն է, ազգային հենքի վրա կրթական ոլորտի օրենսդրության և իրավական ակտերի պահանջներին համապատասխան կրթական ու դաստիարակչական աշխատանքների որակյալ իրականացումն է:

Մեր հիմնական գերխնդիրն է հայրենասեր, հայրենատեր քաղաքացի դաստիարակելը, ով իր գործունեությամբ կնպաստի հայրենիքի անընդհատ զարգացմանն ու հզորացմանը:

3. Հաստատության գործունեությունը.

Դպրոցը հիմնադրել են Բոգդանով եղբայրները:

Սարատովկա գյուղը հիմնադրվել է 1919թ. : Առաջին դպրոցը հիմնադրվել է 1937թ-ին, պահեստի շենքում, 1943թ-ին շենքն այրվել է: 1944թ-ին բացվել է երկրորդ դպրոցը մինչև 1946թ-ը: 1947թ-ից դպրոցն եղել է յոթամյա մինչև 1963թ, այդ ժամանակ դպրոցն ունեցել է 90 աշակերտ: 1963թ-ից դարձել է ութամյա, դպրոցը եղել է երկբաժին՝ ռուսական և հայկական: 1977թ-ից դպրոցը տեղափոխվել է նորակառույց շենք մինչև հիմա: 1984թ-ին դպրոցը դարձել է միջնակարգ: Իր ստեղծման օրվանից դպրոցը շարունակում է կատարել իր բարձր առաքելությունը՝ մատաղ սերնդի կրթությունն ու դաստիարակությունը, լիիրավ մարդու և պետության քաղաքացու կերտումը:Դպրոցը մշտապես մասնակցել և մասնակցում է տարատեսակ կրթական ծրագրերի ու մրցույթների, և գրանցում լուրջ հաջողություններ: Դպրոցն ունի 2 հարկ,13 դասասենյակ,որտեղ 2023-2024 ուստարում սովորում են 73 աշակերտներ և դասավանդում են 15 ուսուցիչներ:Դպրոցի ընդհանուր աշխատակազմը բաղկացած է 25 աշխատողից: Ուսուցչական կոլեկտիվի անդամները ունեն բարձրագույն մանկավարժական կրթություն:
Պահպանելով տարիների ավանդույթները՝ դպրոցը այսօր ստեղծում է նորը, հետաքրքիրը, ժամանակակիցը: Քայլ առ քայլ մեր դպրոցը իր կայուն տեղն է ձեռք բերում կրթության բնագավառում: Առկա ձեռքբերումները, տարբեր մրցույթներում դպրոցի աշակերտության տարած հաղթանակները վերն ասածի ապացույցն է:

Դպրոցը գործում է մեկ հերթով և հինգօրյա աշխատանքային ռեժիմով, ունի հաստատված համադպրոցական տարեկան ուսումնադաստիարակչական աշխատանքային պլան, որի հիման վրա դպրոցի մյուս օղակները պլանավորել են իրենց աշխատանքները:

Ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով ։ 2022թ. վերանորոգվել է ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նախատեսված դասասենյակը։ Առաջին հարկում վերանորոգվել է հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված սանհանգույցը։ 2021թ. վերանոգվել և գործում է տարրական դասարանի աշակերտների համար նախատեսված ճաշարանը, վերազինված անհրաժեշտ սարքավորումներով։ 2020թ.-ից գործում է <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիան, որը ևս ունի անհրաժեշտ սարքավորումներ և ծրագեր։

Դպրոցի շենքի շահագործումը համապատասխանում է անվտանգ շահագործման նորմատիվներին՝ շենքում առկա են դեպի ներս բացվող մեկ պահուստային և մեկ հիմնական ելքեր։

Հաստատության նախասրահում, բոլոր հարկերում փակցված են տարհանման պլան-սխեմաները։ Դպրոցն ունի լոկալ ջեռուցում, շուրջօրյա ջրամատակարարում։

Դպրոցի զարգացման ծրագիրը մշակվել է՝ հիմքում ունենալով պետության պատվերը դպրոցին, այն է՝

- Ժամանակակից կրթության պահանջներին համապատասխան քաղաքացու կրթում և դաստիարակում
- Նորագույն տեխնոլոգիաներով հարուստ կրթական միջավայրի ստեղծում և ունեցածի պահպանում
- Սովորողի կրթական կարիքի գնահատում
- Կրթության պետական չափորոշիչին համապատասխան գիտելիքի տրամադրում՝ շեշտը դնելով նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների վրա
- Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ,
- Համագործակցում պետական և տեղական ինքնակառավարման մարնիների հետ
- Աշակերտների մտավոր զարգացման պայմաններ,
- Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ
- Հայրենասեր և պետականամետ քաղաքացու դաստիարակում

Դպրոցը նախատեսված է 138 աշակերտի համար և իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական կարիքները՝ ըստ լիցենզիայի

- տարրական հանրակրթական՝ 46 տեղ
- հիմնական հանրակրթական՝ 52 տեղ
- միջնակարգ հանրակրթական՝ 40 տեղ
-

Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար

Դասարանների	2020-2021	2021-2022	2022-2023	2023-2024
1 -ին դասարան	1	1	0.5	0,5
2-րդ դասարան	1	1	0.5	1
3-րդ դասարան	1	1	1	0,5
4 -րդ դասարան	1	1	1	1
5-րդ դասարան	1	1	0.5	1
6-րդ դասարան	1	1	0.5	1
7-րդ դասարան	0.5	0.5	1	1
8-րդ դասարան	0.5	0.5	0.5	1
9-րդ դասարան	1	1	0.5	1
10-րդ դասարան	0.5	0.5	1	0,5
11-րդ դասարան	0.5	0.5	1	0,5
12 -րդ դասարան	1	1	1	1
Ընդամենը	10	10	9	10

Սովորողների թիվը ըստ դասարանների՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար

Սովորողների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
1-ին դասարան	6	7	4	4
2-րդ դասարան	9	6	6	3
3-րդ դասարան	4	9	5	5
4-րդ դասարան	7	4	9	6
5-րդ դասարան	12	7	4	8

6-րդ դասարան	6	13	7	4
7-րդ դասարան	4	6	14	7
8-րդ դասարան	10	3	4	14
9-րդ դասարան	10	10	4	4
10-րդ դասարան	6	9	9	2
11-րդ դասարան	6	6	9	8
12-րդ դասարան	4	5	5	8
Ընդամենը	84	85	80	73

2022-2023 ուսումնական տարում դպրոցում սովորողների թիվը նախորդ ուստարվա համեմատ նվազել է:

Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ նախորդ 3 ուստարիների համար

Ցուցանիշը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ	**84**	**85**	**76**	**73**
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	**84**	**85**	**80**	**-**
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	**0**	**0**	**4**	**-**
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	**0**	**0**	**0**	**-**

Սովորողների թվաքանակի փոփոխության պատճառները՝ բնակության վայրի փոփոխություն, արտերկիր մեկնում :

Իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Շենքային պայմաններ	
+ Ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար + Լոկալ ջեռուցման համակարգի առկայություն, դասարաններում պահանջվող ջերմաստիճանի ապահովման հնարավորություն + Մշտական ջրով ապահովվածություն և սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման հնարավորություն + Վերանորոգված և սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան ճաշարանի առկայություն, որից օգտվում են դպրոցի I-IV դասարանների բոլոր աշակերտները։ + Դպրոցի պատուհանները փոխված են + Դպրոցը կոսմետիկ վերանորոգված է	- Նիստերի դահլիճի բացակայություն - Համակարգչային դասասենյակի բացակայություն - Նորագույն համակարգիչների բացակայություն - Լաբորատորիաների և լաբորատոր գույքի բացակայություն - Մարզադահլիճի ոչ բավարար վիճակը

+ Սանհանգոիյցները վերանորոգված են, ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար կան հարմարեցումներ + 2021 թվականին վերանորոգվել է ճաշարանը	

Ծենքային պայմանները	Քանակը	Ընդհանուր մակերեսը/մ^2	Փաստացի վիճակը
Երկհարկանի 1 մասնաշենք	1 մասն/շ	936,7	բավ
Դասասենյակ	12	492,5	բավ
Գրադարան	1	25,3	բավ
Մարզադահլիճ	1	149,6	վատ
ՈՒսուցչանոց	1	35,4	Լավ
Տնօրենի կաբինետ	1	16,8	լավ
<<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա	1	35,4	բավ
Շախմատի սենյակ	1	17,4	բավ
Խոհանոց	1	51,6	լավ
Սննդի պահեստ	1	2,8	լավ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Նյութատեխնիկական բազան	
- «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի առկայությունը, որը հագեցած է անհրաժեշտ սարքավորումներով և ժամանակակից ծրագրերով: Աշակերտները սիրով են հաճախում Արմաթ, հետաքրքրված են նորագույն տեխնոլոգիաներով, մասնակցում են կազմակերպված տարբեր մրցույթների: Արմաթում ստացած գիտելիքներն ու հմտությունները հաջողությամբ կիրառվում է նաև դպրոցում թե ինֆորմատիկայի դասաժամերին, թե մնացած առարկաների ուսումնասիրության ժամանակ: - ԿԱՊԿՈՒ աշակերտների համար նախատեսված, վերանորոգված դասասենյակ - Դասասենյակները վերանորոգված են, ապահովված են գույքով, լուսավոր են, հաճելի միջավայր է ստեղծված կրթության համար: - Դպրոցն ունի պրոյեկտոր, որը կիրառվում է տարբեր առարկաների դասապրոցեսի ընթացքում: Դպրոցում հաճախակի կազմակերպվում են տեսադասեր, միջոցառումներ:	- Առարկայական դասասենյակների, լաբորատորիաների, լաբորատոր անհրաժեշտ գույքի բացակայություն: - Ինֆորմատիկայի և սմարթ դասարանի բացակայությունը: Միայն Արմաթ դասասենյակի համակարգիչները բավարար չեն բոլոր կրթական կարիքների կատարման համար: Դպրոցի համակարգիները, որոնք համալրված կլինեն կրթության համար անհրաժեշտ ծրագրերով, ժամանակի հրամայականն է: - - Քարտեզների, ուսումնական պաստառների մաշվածությունը, անբավարարությունը կամ ընդհանրապես բացակայությունը: - Լաբորատոր գույքի բացակայություն - - Մարզագույքի բացակայությունը - Երկրորդ հարկ տանող թեքահարթակների բացակայությունը: - Լաբորատորիաների, առարկայական սենյակների

	բասակայությունը:

Գույք,սարքավորումներ	Քանակը	Վիճակը
Աշակերտական սեղան	75	բավ
Աշակերտական աթոռ	150	բավ
Գրասեղան	3	լավ
Գրատախտակ	12	լավ
Երկաթյա պահարան	1	բավ
բազմոց	1	բավ
Պրոյեկտոր	1	լավ
Ուսուցչական սեղան	12	լավ
ՈՒսուցչական աթոռ	16	բավ
Տպիչ սարքեր	1	բավ
Սկաներ + տպիչ	1	բավ
նոթբուք	1	լավ

Լվացարան ծորակով	8	
Ճաշարանի սեղան հարմարեցված	4	բավ
Ճաշարանի Աթոռ հարմարեցված	12	բավ
Պահարան	7	բավ
ՈՒսումնական համակարգիչ	3	բավ
Աշխատանքային համակարգիչ	2	բավ
Համակարգչային սեղան	1	բավ
Գազօջախ	1	լավ
Ջեռուցման կաթսա	2	լավ
Ջրատաքացուցիչ	1	լավ
պրոյեկտոր	1	լավ
Մինի համակարգիչ / Արմաթի/	5	լավ
Համակարգիչ /Արմաթի/	2	լավ
<<Բզեզ>> տպիչ 3D	1	լավ
<<Թզուկ>> լազերային-շաղափային հաստոց	1	
Ռոբոտի հավաքածու	1	լավ
Լրացուցիչ սարքավորումներ	1	լավ
Սեղան Արմաթ	8	լավ
Աթոռ փափուկ /Արմաթի/	16	լավ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	

- Դպրոցում ապահովված են ժողովրդավարական - կառավարման սկզբունքները, դպրոցում գործող խորհրդակցական մարմիններն ակտիվորեն ներգրավված են կառավարման գործընթացում: - Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված խորհուրդներ. - 1. Կառավարման խորհուրդ - 2. Մանկավարժական խորհուրդ - 3. Ծնողական խորհուրդ - 4. Աշակերտական խորհուրդ - Բոլոր խորհուրդներն ունեն իրենց կանոնադրությունները, որոնք կազմում է դպրոցը՝ հիմք ընդունելով օրինակելի կանոնադրությունը: Խորհուրդները գործում են անկախ, կանոնավոր գումարում նիստեր և կազմակերպում իրենց աշխատանքները՝ նպաստելով դպրոցի ուսումնադաստիարակչական և կառավարման գործընթացին: Դպրոցում գործում են 3 առարկայական մեթոդական միավորումներ. - 1. Լեզուների - 2. Բնագիտական	- Երբեմն խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության պակաս: - Խորհուրդների գործունեության հաշվետվողականության պակաս: - Իրավական ակտերի փոփոխություններին, իրենց - լիազորություններին, իրավունքներին ու պարտականություններին ոչ լիարժեք տիրապետելը: - Աշակերտական խորհուրդը կարող է լինել առավել - նախաձեռնող, ստեղծագործ և ակտիվ ներգրավվել նաև ներհամայնքային կյանքին: - Աշակերտների ներգրավվածության պակաս դպրոցի ներքին կարգապահական կանոնների մշակմանը:

- 3. Տարրական - Կառավարման խորհուրդը գործում է հաստատության կանոնադրության և այլ իրավական ակտերին համապատասխան: - Մանկավարժական խորհուրդը սահմանված ժամկետներում, երկամսյա պարբերականությամբ իրականացնում է հերթական նիստեր, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության արտահերթ նիստեր: Ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը ուսումնական հաստատության ռեժիմը և այլ կարևորագույն հարցեր քննարկվում և հաստատվում են մանկավաժական խորհրդում: Այն բաց է խորհրդակցկան ձայնի իրավունք ունեցող անձանց համար /աշակերտ, ծնող/: - Կարևորվում է մանկավարժական խորհրդի անդմանների ակտիվ մասնակցությունը քննարկումներին, առաջարկների ներկայացումը, տեղեկացվածությունը: - Աշակերտական խորհուրդը ակտիվ է - Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Ծնողական խորհրդի նախագահը խորհրդակցական ձայնի իրավունքով, ըստ	

անհրաժեշտության, մասնակցում է մանկավարժական խորհրդի նիստերին: Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն գումարում են նիստերը՝ հստակ օրակարգերով: Հաճախակի են ծնողխորհրդի և մանկավարժական աշխատողների հանդիպումները, իրազեկման և տեղեկատվական միջոցառումները:	

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Հաստատության համագործակցությունը համայնքի և կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	

- Դպրոցն ապահովում է լիազորված մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը: Դպրոցը գործուն մասնակցություն է ունենում համայնքային միջոցառումներին, համայնքային խնդիրների վերհանմանը և լուծմանը՝ ըստ հնարավորության: - Դպրոցը կատարում է Լիազոր մարմնի՝ Լոռու մարզպետարանի օրենքին չհակասող հանձնարարականները, մասնակցում, քննարկումների, մասնակցում մարզային կրթական անցուդարձին: - ՀՀ կրթության տեսչական մարմնի ստուգումների արդյունքների ուսումնասիրությունները նպաստում են դպրոցում առկա խնդիրների վերհանմանը, թերությունների շտկմանը: - Ուսուցիչներն ու տնօրենությունը ընդգրկվում են ԿՁՆԱԿ հիմնադրամի կողմից իրականացվող վերապատրաստումներին: - 2023 թվականին 2,5,7 -րդ դասարաններում դասավանդող բոլոր ուսուցիչները անցել են վերապատրաստումներ ԿՁՆԱԿ հիմնադրամի կողմից կազմակեպված, նոր ՀՊՁ-ի ներդրման և	- Դպրոցի առանձնահատկություններից ելնելով՝ երբեմն առաջադրված խնդիրների դժվար իրագործելիությունը: - Նախագծային աշխատանքների պակասը կամ համայնքի կարիքների ուսումնասիրման արդյունքում պլանավոված նախագծերի բացակայությունը: - Դպրոցի համագործակցության ընդլայնման անհրաժեշտությունը միջազգային, հանրապետական, մարզային, ներհամայնքային դպրոցների հետ:

գնահատման նոր չափանիշների ուղղությամբ։ - Արդյունավետ համագործակցություն է ընթանում Գնահատման Թեստավորման Կենտրոնի հետ՝ հատկապես քննական գործընթացների պատշաճ կազմակերպման և իրականցման շուրջ։	

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները	

- - Դպրոցում դասավանդում են մեծ մասամբ աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ: - Մանկավարժները հիմնականում պատրաստակամ են կատարելագործել գիտելիքները, ուսուցման մեթոդները՝ ժամանակի պահանջներին բավարարող կրթության ապահովման նպատակով: - Դպրոցի ուսուցիչները մասնակցում են հերթական ատեստավորմանը, մասնակցում անցկացվող վերապատրաստումներին: - Դպրոցի 15 մանկավարժները ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն - Տնօրենության կողմից խրախուսվում է կամավոր ատեստավորման գործընթացին մասնակցությունը, ուսուցիչները պարբերաբար իրազեկվում են գործընթացի վերաբերյալ հայտարարություններին: - Պարտադիր գործածության բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ և էլեկտրոնային, լրացվում են սահմանված կարգերի համաձայն: Պարտադիր գործածության օրինակելի փաստաթղթերը ըստ հնարավորության	- Չունենք կամավոր ատեստավորված ուսուցիչներ - Տեղեկատվական ռեսուրսների բազմազանության մեջ ոչ ճիշտ կողմնորոշվելը: - Անհարժեշտություն կա խթանել համակարգված սեփական ռեսուրսներ ստեղծելն ու պահպանելը: - Միայն Արմաթ ինժեներական լաբորատորիայի համակարգիչները բավարար չեն դասապրոցեսում լիարժեք կիրառման համար: - Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների պասիվ մասնակցություն , իրավական փոփոխությունների մասին իրազեկվածության պակաս: - Նախաձեռնողականության, ինքնուրույնության պակաս - Խթանել ուսուցիչների կողմից ժամանակակից դասի պահանջներին համապատասխան նորարարությունների կիրառումը - Նպաստել ուսուցչի հեղինակության բարձրացմանը - Զարգացնել աշխատակազմի գործունեության գնահատման խրախուսման ձևերն ու մեխանիզմները

- համապատասխանեցված են դպրոցի առանձնահատկություններին:
- Պարբերաբար իրականացվում են դասալսումներ, վեր են հանվում բացթողումները, կատարվում են քայլեր դրանց շտկման ուղղությամբ:
- Բոլոր ուսուցիչները ստանում են աջակցություն

<u>Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 3 ուստարիների համար</u>

Ցուցանիշը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	2023-2024 ուստարի
Ուսուցիչների ընդհանուր թիվը	**15**	**15**	**14**	**15**
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը կամ դրույքաչափը	**19.73**	**19.75**	**19.75**	**19,75**

Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ՝ նախորդ 3 ուստարիների համար

Ուսուցիչների թիվը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Մինչև 30 տարեկան	4	4	3
31-ից 40 տարեկան	3	3	3
41ից -50 տարեկան	2	2	2
51-ից -55 տարեկան	2	*2*	*2*
56 տարեկան և ավելի	4	*4*	*4*

Ուսուցիչների տարիքային կազմում գերակշռում է մինչև 45տարիքը :

Դպրոցի 15 ուսուցիչներից ունեն բարձրագույն կրթություն:

-

	-
Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**

Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացում

- Շարունակական աշխատանք է ընթանում դասավանդման գործընթացում կիրառվող մեթոդների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ նոր մոտեցումների ներդրման ուղղությամբ:	- Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարությունների ներկայացում - Հեռավար դասերի ստեղծման վարման, պաշարների հավաքագրման, ըստ առարկաների տեսակավորման

- Դպրոցում ուսուցիչների գրեթե 80 տոկոսը տիրապետում է նորագույն տեխնոլոգիաների, կարողանում է դասապրոցեսը կազմակերպել՝ օգտագործելով թվային սարքավորումներ: - Դպրոցն ունի պրոյեկտոր, ուսուցիչները հաճախ են կազմակերպում տեսադասեր, օգտվում էլեկտրոնակին ռեսուրսներից: - Աշակերտները կազմակերպում են բաց դասեր, սահիկահանդեսներ: - Դպրոցն ունի <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա, աշակերտները հաճույքով հաճախում են խմբակի դասերին, ստացած գիտելիքները կիրառում նաև դասերի ընթացքում: Աշակերտները մասնակցում են Դիջիկոդ ծրագրավորման մրցույթին, մասնակցում են տարաբնույթ միջոցառումների, ցուցահանդիսների: - Դպրոցն ունի կայք, որը պարբերաբար թարմացվում է: - Կազամակերպվում են բաց դասեր, կիբերանվտանգությանը վերաբերող քննարկումների: - -	բացակայություն: Սա կարող է նաև լուրջ աջակցող գործիք դառնալ մասնախմբերի աշխատանքները կազմակերպելիս և անփորձ ուսուցիչներին աջակցելու համար: - Անհարժեշտություն կա խթանել համակարգված սեփական ռեսուրսներ ստեղծելն ու պահպանելը: - Միայն Արմաթ սենյակում առկա ռեսուրսները բավարար չեն ըստ անհրաժեշտության բոլոր դասարաններում էլեկտրոնային ռեսուրսների օգտագործման համար: - -
Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**

Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

- Հանրակրթական չափորոշիչների փուլային ներդրմանը պատրաստ լինելու նպատակով , թե ուսուցիչների մեծամասնությունը, թե տնօրենությունը ծանոթացել են նոր իրավակարգավորումներին, մասնակցել են վերապատրաստումների, նաև ԿԶՆԱԿ- ի կողմից իրականացված, քննարկել չափորոշչային նոր պահանջների առանձնահատկությունները, գնահատման նոր համակարգը։ - 2023 թվականի սեպտեմբերից դպրոցում ներդրվել են նոր չափորոշիչները, դպրոցի 2,5,7 դասարաններում դասավանդող ուսուցիչները, տնօրենությունը մասնակցել են դասընթացների և վերապատրաստումների, որոնք պարբերաբար իրականցվում են ԿԶՆԱԿ-ի կողմից։ - Ուսուցիչները, տնօրենն ու փոխնտօրենը մասնակցել են նաև ԿԶՆԱԿ-ի վերջերս կազմակերպված դասընթացներին <<Գնահատում>> թեմայի շուրջ։ - Դպրոցում պարբերաբար իրակացանցվում դասալսումներ թե տնօրենության, թե մենթոր դպրոցի ուսուցիչների կողմից, որի քննարկումների արդյունքում վեր են հանվում բացթողումները,	- Նոր չափորոշիչների ներդրման ընթացքում չնախատեսված դժվարությունների ի հայտ գալը, - նոր պահանջներին ուսուցիչների դժվար հարմարվողականությունը - - -

ուսուցիչներին մեթոդական օգնություն է ցուցաբերվում։ - Ուսուցիչները ամենօրյա ռեժիմով օգտվում են ԿԶՆԱԿ-ի կայքից, որը անընդհատ հագենում է նոր ինֆորմացիայով։ - Դպրոցում 2023-2024 ուստարում գործում են՝ - 5-րդ դասարունում 2 ուսումնական խմբակներ ՝ մաթեմատիկա և Իմ հայրենիքը առարկաներից - 7-րդ դասարանում ընթերցանության 1 ուսումնական խմբակ - 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակում նախատեսված են նախագծային աշխատանքների կատարում 7-րդ դասարանում։ - Ըստ ուսումնական պլանի 2023-2024 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում, ըստ նոր ՀՊՉ-ի իրականացվում են ՝ - ***Ուսումնական խմբակներ*** - <<Ընթերցանության գաղտնիքները>> - տարրական դպրոց - <<Իմ հայրենիքի գողտրիկ անկյունը>>, <<Հետաքրքրաշարժ մաթեմատիկա>>, <<Ընթերցանություն և ասմունք>> - միջին դպրոց, - <<Առողջ ապրելակերպ>> - պարտադիր խմբակները, - ***Ռուսումնական նախագծեր*** ' - <<Մաթեմատիկայի գաղտնիքները>> նախագծային աշխատանք՝ 7-րդ դասարան - իսկ հետ մնացող աշակերտների համար նախատեսված է	

կազմակերպել ***երկարօրյա խմբակներ:*** -	
Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
Աշխատակազմի արժևորման խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն	
- Ուսուցիչների կամավոր ատեստավորման մասնակցելու հնարավորություն և քաջալերում: - Ինքնակրթության համար հասանելի ռեսուրսները՝այդ թվում էլեկտրոնային: - Ուսուցիչների հետազոտական աշխատանքների իրականացման, նորարարական նախաձեռնություններին աջակցություն: Մասնագիտական վերապատրաստումներին մասնակցելու հնարավորությունը: - Ուսուցիչները զգում են տնօրինության աջակցությունն ու վստահությունը, բաց են քննարկումների և առաջարկների համար:	- Կամավոր ատեստավորված ուսուցիչների բացակայություն - Ֆինանսական կամ խրախուսական նվերների տեսքով խրախուսումների սակավություն - Հաջողությունների ու ձեռքբերումների սակավություն - - - -

- Մեթոդական միավորումների նիստերի ժամանակն քննարկվում են առաջավոր փորձի փոխանակման հնարավորություններն ու մեխանիզմերը: - Կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ, քննարկվում արդյունքները - -	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ուսումնական նպատակով ծախսերի վերլուծություն՝ դրանց արդյունավետության ցուցանիշների, շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից	
- Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի կայքում: https://saratovka.schoolsite.am/ - Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են. աշխատավարձ և	- Սակավ ֆինանսական միջոցները՝ պայմանավորված աշակերտների թվի նվազումով՝ - 2020-2021ուստարի -85 աշակերտ -

դրան հավասարեցված վճարումներ, կոմունալ վճարներ, գրասենյակային և տնտեսական ապրանքներ, գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր, կապիտալ ծախսեր, հատուկ նպատակային ծախսեր, այլ ծախսեր: - 2023 թվականի սեպտեմբերից ներդրվեց ֆինանսավորման նոր կարգն ու մեթոդաբանությունը, որի արդյունքում սահմանվեց դպրոցում դրույքչափը 119809 դրամ, ավելացավ դասղեկության, մ/մ աշխատանքների վարձատրության չափը, ինչպես նաև ԲՏՃ առարկաներին տվեց նաև հավելավճար 25%-ի չափով: Սրանով կարգավորվեց նաև տարբերակված մոտեցումը ուսուցիչների միջև, ինչպես նաև բարձրացավ դրույքաչափը:	- 2021-2022 ուստարի - 84 աշակերտ - - 2022-2023 ուստարի - 80 աշակերտ

Նպատակներ և խնդիրներ

Նպատակ 1 - Կրթական ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացում

խնդիրներ	*Գործողություններ և ակնկալվող արդյունքներ*	*Արդյունքների գնահատման չափանիշներ*	*Պատասխանատուներ*	*Ժամկետներ*	*Ֆինանսական աղբյուրներ*
Նյութատեխնիկական բազայի հարստացում	Համակարգչային դասասենյակի ստեղծում, որը ժամանակի հրամայական է հանդիսանում	Դպրոցն ունի նորագույն տեխնիկայով համալրված համակարգչային դասասենյակ	Տնօրեն,	2024-2026	Պետբյուջե, ահովանավորներ
	Համակարգիչների գնում			2024-2026	
	Օժանդակ սարքավորումների ձեռքբերում			2024-2027	

խնդիրներ	*Գործողություններ և ակնկալվող արդյունքներ*	*Արդյունքների գնահատման չափանիշներ*	*Պատասխանատուներ*	*Ժամկետներ*	*Ֆինանսական աղբյուրներ*
Նյութատեխնիկական բազայի հարստացում	Սպորտդահլիճի վերանորոգում	Դպրոցն ունի անհրաժեշտ սպորտային գույքով համալրված սպորտդահլիճ	Տնօրեն	2024-2027	Պետբյուջե, ահովանավորներ
	Սպորտային գույքի ձեռքբերում			2024-2027	
				2024-2027	

խնդիրներ	*Գործողություններ և ակնկալվող արդյունքներ*	*Արդյունքների գնահատման չափանիշներ*	*Պատասխանատուներ*	*Ժամկետներ*	*Ֆինանսական աղբյուրներ*
Նյութատեխնիկական բազայի հարստացում	Լաբորատորիաների ստեղծում	Դպրոցն ունի Լաբորատորիաներ, որոնք համալրված են անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով	Տնօրեն , մ/մ	2026-2029	Պետբյուջե, ահովանավորներ
	Լաբորատոր սարքավորումների ձեռքբերում			2026-2029	
				2026-2029	
	Լաբորատոր անհրաժեշտ նյութերի ձեռբերում				

Ռիսկեր

1. Անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի համալրման համար ֆինանսական միջոցների պակաս
2. Այլ ֆորսմաժորային իրավիճակ

Ռիսկերը մեղմացնող անհրաժեշտ միջոցառումներ

1. Ֆինանսավորման պակասի դեպքում ՀՀԿԳՄՄՆ և Լոռու մարզպետարանի համաձայնությամբ դիմել տարբեր հիմնադրամների հովանավորների

Արդյունքների գնահատման չափանիշները

Գնահատման ենթակա գործողությունը	*Արդյունավետ*	*Բավարար*	*Ոչ արդյունավետ*
Համակարգչային դասասենյակի ստեղծում, որը ժամանակի հրամայական է հանդիսանում	*Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ, որը բավարառում է ժամանկակից պահանջներին*	*Դպրոցն ունի համակրագչային դասասենյակ*	*Համակարգչային դասասենյակը չկա*
Համակարգիչների գնում	*Գնվել են նորագույն համակարգիչներ*	*Ոչ ամբողջ ծավալով է կատարվել համակարգիչների*	*Համակարգիչներ չեն գնվել*

		ձեռքբերումը	
Օժանդակ սարքավորումների ձեռքբերում	*Ձեռք են բերվել համակարգիչների օժանդակ սարքավորումներ*	*Համակարգիչների օժանդակ սարքավորումները թերի են ձեռքերվել*	*Համակարգիչների օժանդակ սարքավորումներ չեն գնվել*
Սպորտդահլիճի վերանորոգում	*Վերանորոգվել է բոլոր պետական չափանիշներին համապատասխան սպորտդահլիճ*	*Վերանորոգվել է սպորտդահլիճը*	*Սպորտդահլիճը չի վերանորոգվել*
Սպորտային գույքի ձեռքբերում	*Ձեռք են բերվել նորագույն սպորտային գույք*	*Սպորտային գույքը ձեռք է բերվել թերի*	*Չի ձեռքերվել սպորտային գույք*
Լաբորատորիաների ստեղծում	*Ստեղծվել են ժամանակակից ՀՊՁ պահանջներին համապատասխան լաբորատորիաներ*	*Ստեղծվել են լաբորատորիաներ*	*Չի ստեղծվել լաբորատորիա*
Լաբորատոր սարքավորումների ձեռքբերում	*Ժամանակակից լաբորատոր գույքը ձփռք է բերվել ամբողջ ծավալով*	*Ոչ ամբողջական լաբորատոր գույքի ձեռքբերում*	*Լաբորատոր գույք ձեռք չի բերվել, կամ չի համապատասխանում ստանդարտներին*
Լաբորատոր անհրաժեշտ նյութերի ձեռքերում	*Ժամանակակից լաբորատոր նյութերը ձեռք է բերվել ամբողջ ծավալով*	*Ոչ ամբողջական լաբորատոր նյութերի ձեռքբերում*	*Լաբորատոր նյութերը ձեռք չի բերվել, կամ չի համապատասխանում ստանդարտներին*

Նպատակ 2 - Աշակերտների սովորելու մոտիվացիայի խթանում

խնդիրներ	*Գործողություններ և ակնկալվող արդյունքներ*	*Արդյունքների գնահատման չափանիշներ*	*Պատասխանատուներ*	*Ժամկետներ*	*Ֆինանսական աղբյուրներ*
Աշակերտների սովորելու մոտիվացիայի խթանում	*Աշակերտները հաճույքով են մասնակցում դասերին*	Սովորողների գնահատման սկզբունքներն ու ձևերի արդյունավետ կիրառումը: Հեռադարձ կապի ապահովումը, մշտադիտարկումներն ու համեմատական վերլուծությունները, որը հնարավորություն կտա բարելավել կրթության որակը: Կրթական գործընթացի մասնակիցների կանխարգելիչ աշխատանքներ	Տնօրենություն, մանկավարժական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, ծնողական խորհուրդ դասղեկներ,ուսուցիչներ	2024-2029	Պետբյուջե, հովանավորներ
	Նոր չափորոշիչային պահանջներին համապատասխան բարձրորակ կրթության ապահովում			2024-2029	
				2024-2029	
	Գնահատման նոր մեխանիզմը հնարավորություն կտա մոտիվացնել երեխաներին՝ առանց վախի անբավարար գնահատականի համար:				
	Ապահովել դիդակտիկ նութերով ամապովումը, որը դասը կդարձնի առավել հետաքրքիր				

Արդյունքների գնահատման չափանիշները

Գնահատման ենթակա գործողությունը	*Արդյունավետ*	*Բավարար*	*Ոչ արդյունավետ*
Աշակերտները հաճույքով են մասնակցում դասերին	*Ստեղծված են բարենպաստ միջավայր աշակերտների արդյունավետ կրթության և դաստիարակության համար*	*Ոչ միշտ է միջավայրը համապատասխանում պահանջներին*	*Դեռևս թերի կրթական միջավայրը*
Նոր չափորոշիչային պահանջներին համապատասխան բարձրորակ կրթության ապահովում	*Ապահովված են նոր չափորոշիչային պահանջներին համապատասխան կրթության բոլոր պայմանները*	*ՀՊՉ-ի պահանջները միշտ չեն կատարվում ամբողջ ծավալով*	*ՀՊՉ պահանջները կատարվում են թերի*
Գնահատման նոր մեխանիզմը հնարավորություն կտա մոտիվացնել երեխաներին՝ առանց վախի անբավարար գնահատականի համար:	*Քայլ առ քայլ ներդրվում են գնահատման նոր չափանիշները*	*Դժվարությամբ են ներդրվում գնահատման նոր չափանիշները*	*Թերի են ներդրված գնահատման նոր չափանիշները*
Ապահովել դիդակտիկ նութերով ամապովումը, որը դասը կդարձնի առավել հետաքրքիր	*Դպրոցն ապահովված է դիդակտիկ նյութերով*	*Դպրոցը թերի է ապահովված դիդակտիկ նյութերով*	*Դպրոցում դիդակտիկ նյութեր չկան*

Նպատակ 3– Մանկավարժական աշխատողների արհեստավարժության բարձրացում, կրթական ծառայությունների գրագետ իրականացում

խնդիրներ	*Գործողություններ և ակնկալվող արդյունքներ*	*Արդյունքների գնահատման չափանիշներ*	*Պատասխանատուներ*	*Ժամկետներ*	*Ֆինանսական աղբյուրներ*
Մանկավարժական աշխատողների արհեստավարժության բարձրացում, կրթական ծառայությունների գրագետ իրականացում		Սովորողների - Խրախուսման մեխանիզմների քննարկումներ, հրամաններ: - Տարակարգերի վկայագրեր, դասընթացների մասնակցության վկայագրեր:	Տնօրեն, ուսուցիչներ, բազմամասնագիտական թիմ տնօրենի ուսումնական գծով տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ	2024-2029	Պետական բյուջե, Կրթության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպություններ,
	Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը, տարակարգերի ձեռքբերմանը, մասնագիտական դասընթացներին			2024-2029 2024-2029	
	Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով :				
	սկսնակ կադրերի հետ պարբերաբար տարվող աշխատանք				

Արդյունքների գնահատման չափանիշները

Գնահատման ենթակա գործողությունը	*Արդյունավետ*	*Բավարար*	*Ոչ արդյունավետ*
Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը կամավոր ատեստավորմանը, տարակարգերի ձեռքբերմանը, մասնագիտական դասընթացներին	*Ուսուցիչների 50 %- ը հաջողությամբ մասնակցել են ուսուցիչների կամավոր ատեստավորմանը*	*Ուսուցիչների 30%- ը հաջողությամբ մասնակցել են ուսուցիչների կամավոր ատեստավորմանը*	*Ուսուցիչները ցանկություն չեն հայտնում մասնակցել ուսուցիչների կամավոր ատեստավորմանը*
Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով :	*Համակազմը շարունակաբար համալրվում է փորձառու մասնագետներով:*	*Համակարգմի համալրումը դժվար է իրականացվում*	*Համակազմի համալրում չի իրականացվում*
Սկսնակ կադրերի հետ պարբերաբար տարվող աշխատանք	*Սկսնակ մասնագետների հետ շարունակաբար տարվում է աշխատանք, առաջավոր փորձի փոխանակում*	*Սկսնակ մասնագետների հետ աշխատանքը տարվում է ոչ պարբերաբար*	*Սկսնակ մասնագետների հետ աշխատանք չի իրականացվում*

Ռիսկեր

1. Ուսուցիչների մասնագիտական աճի, ինքնակրթության մոտիվացիայի պակաս
2. Խրախուսման համար անհրաժեշտ միջոցների բացակայություն

Ռիսկերը մեղմացնող անհրաժեշտ միջոցառումներ

1. Քննարկումներ հրավիրել ուսուցիչների, ծնողական խորհրդի անդամների և աշակերտների հետ և մշակել գործիքակազմ ցանկալի արդյունքին հասնելու համար
2. Մշակել խրախուսման մեխանիզմ ուսուցիչների և աշակերտների համար
3. Ֆինանսավորման պակասի դեպքում ՀՀԿԳՄՄՆ և Լոռու մարզպետարանի համաձայնությամբ դիմել տարբեր հիմնադրամների հովանավորների

Նպատակ 4- Հանրակրթական պետական չափորոշչով սահմանված՝ միջնակարգ դպրոցի շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջների, կարողունակությունների ու վերջնարդյունքների ապահովում

Խնդիրներ	*Գործողություններ և ակնկալվող արդյունքներ*	*Արդյունքների գնահատման չափանիշներ*	*Պատասխանատուներ*	*Ժամկետներ*	*Ֆինանսական աղբյուրներ*
Սովորողների մոտիվացիայի խթանում	Կրթական հարմարավետ ու բարեկարգ միջավայրի ստեղծում /նպատակ 1/ Հետաքրքիր ու նորարական ուսումնական մեթոդների կիրառում Երեխայի կրթական պահանջներից բխող կառավարման, դասի պլանավորման, կրթական հարմարավետ միջավայրի	Իրականացված աշխատանքների հաշվետվությունն եր՝ տարեկան առնվազն երկու անգամ: Դասալսումների արձանագրություններ, մշտադիտարկման արդյունքներ Երեխաների կրթական պահանջների ուսումնասիրման փաստաթղթեր, օտարման,	տնօրեն, տնօրենի տեղակալներ, մանկավարժներ,	2024-2029	Բյուջե, դրամաշնորհային ծրագրեր, արտաբյուջե

	ապահովման աշխատանքներ	բռնության, խտրական վերաբերմունքի կանխարգելման նպատակով իրականացված սեմինարներ, հանդիպումներ, անհատական և իրավիճակային աշխատանքների նկարագրություններ			

Արդյունքների գնահատման չափանիշները

Գնահատման ենթակա գործողությունը	*Արդյունավետ*	*Բավարար*	*Ոչ արդյունավետ*
Կրթական հարմարավետ ու բարեկարգ միջավայրի ստեղծում /նպատակ 1/	*Ստեղծված է հարմարավետ ու բարեկարգ միջավայր կրթության համար*	*Ոչ ամբողջությամբ են կատարված բարեկարգ միջավայրի ստեղծման աշխատանքները*	*Բարեկարգ և հարմարավետ միջավայրի ատեղծման աշխատանքներ կատարված չեն։*
Հետաքրքիր ու նորարական ուսումնական մեթոդների կիրառում	*Կիրառվում են հետաքրքիր ու նորարական ուսումնական մեթոդներ*	*Ոչ բոլոր ուսուցիչների կողմից են կիրառվում նորարական ուսումնական մեթոդներ*	*Ուսուցիչները դժվարությամբ են կիրառում նորարական ուսումնական մեթոդները*
Երեխայի կրթական պահանջներից բխող կառավարման, դասի պլանավորման, կրթական հարմարավետ Միջավայրի ապահովման աշխատանքներ	*Ստեղծված են կրթական պահանջներից բխող կառավարման, դասի պլանավորման կրթական հարմարավետ միջավայրի*	*Կրթական միջավայրը թերի է*	*Կրթական պահանջներից բխող հարմարավետմիջավայր ստեղծված չէ*

Նպատակ 5- Կրթության որակի բարելավման, դասավանդման մոտեցումների արդիականացում՝ մասնավորապես հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների կատարելագործում

Խնդիրներ	*Գործողություններ և ակնկալվող արդյունքներ*	*Արդյունքների գնահատման չափանիշներ*	*Պատասխանատուներ*	*Ժամկետներ*	*Ֆինանսական աղբյուրներ, նյութատեխնիկական միջոցներ*
Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, դասավանդման մեթոդների արդիականացում	Ուսուցիչների մասնակցության խթանում սեմինարներին, վեբինարներին՝ հեռավար կրթության հմտությունները կատարելագործելու նպատակով Ներդպրոցական / և ոչ միայն/ էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում, կիրառում Համակարգչային տեխնիկայի, թվային գրատախտակի , մարկերային գրատախտակների և այլ անհրաժեշտ միջոցների	ՏՀՏ կիրառմամբ դասերի, հեռավար դասերի /ըստ անհրաժեշտության/ պլանավորում և իրականացում: Էլեկտրոնային պաշարներ Ձեռք բերված գույք	Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ, մեթոդմիավորմա ն նախագահներ, կրթական կազմակերպություններ	2024-2029	Պետական բյուջե, արագ ինտերնետ կապ դպրոցի տարածքում, համակարգիչներով, էլ. Գրատախտակով հագեցվածություն, մասնագիտական գրականություն

ձեռքբերում

Արդյունքների գնահատման չափանիշները

Գնահատման ենթակա գործողությունը	*Արդյունավետ*	*Բավարար*	*Ոչ արդյունավետ*
Ուսուցիչների մասնակցության խթանում սեմինարներին, վեբինարներին ՝ հեռավար կրթության հմտությունները կատարելագործելու նպատակով	*Ուսուցիչները պարբերաբար մասնակցում են սեմինարների և վերապատրաստումների, տիրապետում են հեռավար կրթության հմտություններին :*	*Ուսուցիչները դժվարությամբ են օգտագործում հեռավար կրթության գործիքները:*	*Ուսուցիչները չեն տիրապետում հեռավար կրթության գործիքներին:*
Ներդպրոցական / և ոչ միայն/ էլեկտրոնային ռեսուրսների ստեղծում, կիրառում	*Ստեղծված են ներդպրոցական էլեկտրոնային ռեսուրսներ:*	*Դպրոցում էլեկտրոնային ռեսուրսները թերի են ներդրված:*	*Դպրոցում ներդրված չեն էլեկտրոնային ռեսուրսներ:*
Համակարգչային տեխնիկայի, թվային գրատախտակի , մարկերային գրատախտակների և այլ անհրաժեշտ միջոցների ձեռքբերում	*Դպրոցում կան և դասապրոցեսում կիրառվում են թվային գրատախտակ:*	*Դպրոցում թերի են օգտագործվում թվային , համակարգչային ռեսուրսները:*	*Դպրոցում չկա էլեկտրոնային գրատախտակ, մարկերային գրատախտակ:*

Ռիսկեր

3. Ֆիանասական միջոցների սակավություն
4. Ուսուցիչների պասիվությունը, անվստահությունը նորարաական մեթոդների արդյունավետության նկատմամբ

Ռիսկերը մեղմացնող անհրաժեշտ միջոցառումներ

- Իրականացնել երկարաժամկետ և կարճաժամկետ ծախսերի ու պահանջների վերլուծություն:
  Կարճաժամկետ պահանջների մեջ ներառել այն ամենն ինչ առաջին անհրաժեշտություն է կրթության որակի բարելավման, երկարատևի մեջ, այն ինչը ցանկալի է ունենալ:
- Հրավիրել մասնագետներ, կազմակերպել սեմինարներ, դասախոսություններ արդի մեթոդների կիրառման փորձի փոխանակման, գործնական հմտությունների փոխանցման նպատակով:

Ֆինանսավորման պակասի դեպքում ՀՀԿԳՄՍ և Լոռու մարզպետարանի համաձայնությամբ դիմել տարբեր հիմնադրամների հովանավորների

2. Վերահսկողության մեխանիզմներ

Ծրագրի իրագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնելու է կառավարման խորհուրդը (ԿԽ): Այս պարագայում շատ կարևոր է կառավարման խորհրդի հետ համագործակցային աշխատանքը, ԿԽ-ի անդամների հանրակրթության ոլորտի օրենսդրությանը տիրապետելը, արդյունավետ քննարկումները և ի շահ դպրոցի Զարգացման ծրագրի իրականացմանը աջակցելը:

Դպրոցի առաքելությունը և Ծրագիրը ենթակա են փոփոխությունների՝ ժամանակակից կրթական պահանջների դինամիկ փոփոխություններին համահունչ, ներքին կամ արտաքին գործոնների ազդեցությունների դեպքում, ինչպես նաև ժամկետից շուտ առանձին գործառույթներ իրականացվելուց հետո:

Ծրագրի կատարողականի վերաբերյալ տեղեկատվությունն ամեն տարի ներկայացվում է կառավարման և խորհրդակցական մարմիններին՝ տարեկան առնվազն երկու անգամ: Աշխատանքն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով կարելի է նաև նախատեսել եռամսակային հաշվետվություններ:

Հաշվետվողականությունն ապահովելու նպատակով կկազմվեն հաշվետվության ձևեր, որոնք կներկայացվեն խորհրդի հաստատմանը՝ համաձայն տվյալ օրինակելի ձևի:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

No	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման/ առկայության դեպքում/ պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկու-թյուններ	Նշումներ